ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/54

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2017թ. թիվ 03/26-3/16461-17 գրությամբ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 01.09.2017թ. թիվ 01/61-17789 գրության հիման վրա, 07.09.2017թ. թիվ 03/26-3/16461-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ին (այսուհետև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 11.09.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1175514]-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ին:

«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն 13.09.2017թ. գրությամբ հայտնել է, որ մասնակցել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/13» ծածկագրով գնման ընթացակարգին, որի հայտերի ներկայացման ժամկետ է սահմանվել 2017թ. օգոստոսի 28-ը ժամը 11:00-ն և նույն օրը ժամը 11:10 րոպեին արդեն իսկ գնումների կայքի հայտեր բաժնից հնարավոր է եղել ճշտել մասնակիցների գնային առաջարկները, ինչի արդյունքում պարզվել է, որ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն չի զբաղեցնում ոչ առաջին և ոչ էլ երկրորդ տեղերը, ինչը և հետաքրքրություն չստեղծեց ոչ միտումնավոր, ուշիմ և հետևողական լինելու Ընթացակարգի գնահատման հետագա ընթացքին:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Armeps» համակարգով նշված ծածկագրով փաթեթի բեռնման համակարգում բացակայել է առանձնացված լիցենզիայի կցման պատուհանը, որը առհասարակ առկա է եղել Երևանի քաղաքապետարանի այլ մրցույթների ներբեռնման համակարգում: Վերջինս թույլ է տվել հասկանալու, որ լիցենզիան պահանջվելու է միայն հաղթող կազմակերպություն ճանաչվելու պարագայում:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի գնումների վարչության աշխատակցի՝ Արծրուն Վարդանյանի կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկված էլ. գրությունը չի դիտարկվել «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից, քանի որ այն գտնվել է էլեկտրոնային գրույթունների «junk e-mail» բաժնում և այն դիտարկվել է Ընկերության կողմից միայն 11.09.2017թ.: Ավելին՝ Երևանի քաղաքապետարանի կողմից բացի նշված՝ էլեկտրոնային եղանակով, ուրիշ այլ եղանակով (պաշտոնական գրությամբ, հեռախոսային զանգով կամ խորհրդատվության կարգով) Ընկերությանը տեղեկացում/ծանուցում/ խորհրդատվություն չի կատարվել:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների

նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընկերությունը հայտնել է, որ հիմք ընդունելով վերագրյալը, «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ ծածկագրով հայտը ենթակա է մերժման, այլ ոչ թե՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման:

Ամփոփելով, Ընկերությունը հայտնել է, որ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն չի կատարել որևիցէ միտումնավոր գործողություն՝ մրցույթի հետագա մասնակցությունից խուսափելու համար:

Ընկերությունը հայտնել է նաև, որ 2017թ. փետրվարի 9-ին «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մրցանակներ շնորհելու մասին» N 109-Ա ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ին հանձնվել է ՀՀ կառավարության դիպլոմ, ինչպես նաև՝ 2017թ. փետրվարի 28-ին Ընկերությանը տրվել է օրինապահ հարկ վճարողի հավաստագիր և տարբեր միջազգային կառույցների կողմից բարձր գնահատականի սերտիֆիկատներ: Ավելին՝ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն ունի ISO 9001:2015 համապատասխանության սերտիֆիկատ: Նշված բոլոր դիպլոմները և հավաստագրերը «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն ստացել է բարեխիղճ, ազնիվ և արդար գործողությունների և մատուցված ծառայությունների համար:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.09.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն 29.09.2017թ. թիվ 29/09-1 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը իր իրավունքների պատշաճ պաշտպանությունն իրականացնելու համար կարիք ունի ներգրավելու փաստաբանի: Ավելին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմնավորվածությունը օրենքի միատեսակ կիրառության տեսանկյունից բացահայտելու համար «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն պարզաբանում ստանալու նպատակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Ամփոփելով վերոշարադրվածը, Ընկերությունը խնդրել է հետաձգել «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման կայացումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.09.2017թ. թիվ 01/61-17789 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/13» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն:

Ընկերության հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ բացակայում է հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը: Պատվիրատուն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը՝ առաջարկելով Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել

անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.09.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է 01.09.2017թ. թիվ 01/61-17789 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/54 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/54 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ նաշագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/13» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն:

2. Մրցույթի հրավերի ՄԱՍ I-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը.

3. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 28.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի հայտում առկա չի հրավերով նախատեսված լիցենզիան, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով << կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

4. Մրցույթի քարտուղարը 28.08.2017թ. ծանուցել է Ընկերությանը և հայտնել է, որ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև

29.08.2017թ. ներառյալ շտկել անհամապատասխանությունը: Մինչև նշված ժամկետի ավարտը անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

5. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 30.08.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի հայտը:

5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2017թ. թիվ 03/26-3/16461-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 01.09.2017թ. թիվ 01/61-17789 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի 13.09.2017թ. և 29.09.2017թ. գրությունները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենքի) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝*** հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ նաշագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/13» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն:

Մրցույթի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը.

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 28.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի հայտում առկա չի հրավերով նախատեսված լիցենզիան, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել

Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 30.08.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի հայտը:

«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն 13.09.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ մասնակցել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/13» ծածկագրով գնման ընթացակարգին, որի հայտերի ներկայացման ժամկետ է սահմանվել 2017թ. օգոստոսի 28-ը ժամը 11:00-ն և նույն օրը ժամը 11:10 րոպեին արդեն իսկ գնումների կայքի հայտեր բաժնից հնարավոր է եղել ճշտել մասնակիցների գնային առաջարկները, ինչի արդյունքում պարզվել է, որ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն չի զբաղեցնում ոչ առաջին և ոչ էլ երկրորդ տեղերը, ինչը և հետաքրքրություն չի ստեղծել՝ ոչ միտումնավոր, հետևողական լինելու Ընթացակարգի գնահատման հետագա ընթացքին:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Armeps» համակարգով նշված ծածկագրով փաթեթի բեռնման համակարգում բացակայել է առանձնացված լիցենզիայի կցման պատուհանը, որը առհասարակ առկա է եղել Երևանի քաղաքապետարանի այլ մրցույթների ներբեռնման համակարգում: Վերջինս հիմք է հանդիսացել ենթադրելու, որ լիցենզիան պահանջվելու է միայն հաղթող կազմակերպություն ճանաչվելու պարագայում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ **գնման գործընթացը** գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, ***իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է,*** ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, ***հանդիսանում է մասնակցի իրավունքը***: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո:

Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից Մրցույթի հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը պետք է ներկայացվեր հայտով և ոչ թե մրցույթի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո, ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից հայտով լիցենզիայի պատճենը չներկայացնելը՝ որը տվյալ փուլում հանդիսանում է մասնակցի իրավունքը և ոչ թե պարտականությունը, կարող է հիմք հանդիսանալ հայտի մերժման այլ ոչ թե՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Տ

ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2017թ. թիվ 03/26-3/16461-17 գրությամբ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08417251) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ